ԽՂՃԻ ՈՒ ՄՏՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՍՏ. ՆԱԶԱՐՅԱՆՑԻ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔՈՒՄ

ԹԱԶՄԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

Ազատախոհության և աթեիզմի պատմության մեջ, որպես կանոն, լուսավորական մտքի ներկայացուցիչները հանդես են եկել խղճի ու մտքի ազատության պաշտպանության դիրքերում, ընդդեմ կրոնական անհանդուրժողականության։ Խղճի ազատության համար մղվող պայքարը կապված էր բուրժուական նոր հարաբերությունների զարգացման և բուրժուական նոր ազգերի ձևավորման խնդիրների հետ։

Ինչպես հայտնի է, XIX դ. 40—60-ական թվականներին հայ իրականության մեջ առաջադիմական միտքը լուսավորական շարժման կարևորագույն խնդիրներից մեկը համարեց խղճի ազատության պահանջը։ Թե՛ կրոնական բազմաթիվ սկզբունքների քննադատությամբ, թե՛ խղճի ազատության պահանջով հանդես եկավ նաև Ստ. Նազարյանցը։ Լինելով հասարակական առաջադիմության և ժողովրդի լուսավորության ջերմ պաշտպաններից մեկը, նա մարտահրավեր նետեց ֆեոդալական գաղափարախոսությանը և այն սրբագործող տիրապետող միջնադարյան մտածելակերպին։ Հայ լուսավորիչը մարդու վերաբերմունքն այս կամ այն կրոնական դավանանքի նկատմամբ դիտում էր որպես բնական իրավունք և դրանով իսկ օբյեկտիվորեն մերժում կրոնի աստվածային հայտնության գաղափարը։ Հավատարիմ մնալով իր լուսավորական գաղափարներին, նա միաժամանակ առաջարկում էր հայ հոգևորականությանը լուսավորել նոր գիտության լույսով, որպեսզի այն ըմբռնի քրիստոնեության բուն էությունը՝ ազատության և սիրո օրենքը և ճիշտ հաղորդի ժողովրդին։

Հայ եկեղեցու ներկայացուցիչները ձգտում էին հասարակությանը համոզել հավատարիմ մնալ լուսավորչականությանը և կրոնական այդ ուղղությունը դիտել որպես միակն ու ճշմարիտը։ Վ. Մանկունի եպիսկոպոսը և քահանա Վ. Շահանյանցը «Արարատում» հանդես եկան ընդարձակ հոդվածներով՝ ընդդեմ հայ լուսավորական մտքի։ Իր «Կրոնի ազատության խնդիրը» հոդվածում Վ. Շահանյանցը գրում էր. «Եթե յուրաքանչյուր մի անհատ իր համոզմունքի, խղճի և գաղափարի ազատությամբ սկսե ճանաչել աստծուն և պաշտել նորան, ուրեմն պետք է տարբեր աստվածներ ծնվեն և պաշտվեն մարդկանց կողմից նրանց բոլորովին տարբեր ազատ համոզմունքներին համաձայն, որոնցից, իհարկե, նորից և նորից պիտի ծնեն բազմաստվածության աղանդը»[1]։ Կղերի պարագլուխները խղճի ազատության կոչից վախենում էին ոչ միայն այն պատճառով, որ հայը կարող էր դուրս գալ լուսավորչական եկեղեցու ազդեցությունից, այլև նրա համար, որ կհանգեր աթեիզմի։ Պակաս տագնապի մեջ չէին առաջավոր դեմոկրատական հայացքների դեմ հան-

1 «Արարատ», 1860, № 9, էջ 409։

դես եկող կղերապահպանողական հոսանքի ներկայացուցիչները, որոնք պաշտպանելով ֆեոդալական հարաբերությունները, օգտագործում էին կրոնի և ռեակցիոն փիլիսոփայության ամբողջ զինանոցը[2]։ Ազգի պահպանության հիմքը համարելով կրոնը, նրանք գտնում էին, թե չպետք է ձեռք բարձրացնել կրոնի և եկեղեցու վրա, որովհետև կրոնի փերացումով իրը կոչնչանա նաև հայ ազգը։ Այս տեսակետից էլ նրանց պայքարն ուղղված էր ոչ միայն Մ. Նալբանդյանի, այլև Ստ. Նազարյանցի դեմ։

Խավարամոլության ու կրոնական անհանդուրժողականության դեմ մղվող պայքարի հարցերում Ստ. Նազարյանցը հետևում էր արևմտաեվրոպական լուսավորիչների հայացքներին։ Իր լուսավորական գաղափարներին նա հանգել է գլխավորապես Վոլտերի և Ռուսսոյի ազդեցության տակ։ Խղճի ու մտքի ազատության պահանջը Ստ. Նազարյանցը շոշափել է ինչպես վաղ շրջանի, այնպես էլ հետագայի աշխատություններում։ «Վարդապետարան կրոնի» գրքույկում նա գրում էր. «Ամենայն ազգ ունի յուր հատուկ հավատը, յուր հատուկ կրոնը և ամեն մինի համար յուր սեփականը սիրելի և թանկագին է։ Ամեն մարդու համար յուր հավատը ճանապարհ է՝ այս երկրի վերա երջանիկ լինելու, և երկնքումն՝ երանություն գտնելու։ Սորան նայելով՝ պարտական է քրիստոնյան պատվիլ և հարգիլ յուր ընկերի կրոնական հավատը, թե՛ նորան մասնակից լիներ, և թե՛ ոչ... Օտարի հավատը երկմիտ խոսքերով չխախտեր, յուր եղբորների կրոնական արարողությունների վերա՝ թեև լինին իսկապես հիմարական՝ ծաղր չառներ և նոցա հավատը կրոնական բաների մասին չբռնադատեր»[3]։ Այս գրքույկում արծարծած լուսավորական գաղափարների համար Ստ. Նազարյանցը մեղադրվեց լյութերականության մեջ և սկսեց հալածվել։ Սակայն, ինչպես ճիշտ նկատել է Ռ. Կարապետյանը, անտեսելով այդ մեղադրանքն ու հալածանքները, «Նազարյանցը շարունակեց պայքարել կրոնական հանդուրժողականության համար թե ուղղակի՝ հրապարակախոսի անմիջականությամբ պաշտպանության տակ առնելով խղճի ազատության գաղափարը, թե անուղղակի՝ իր հայացքներին արձագանքող թարգմանական գեղարվեստական և բնագիտական բնույթի նյութերի հրապարակման միջոցով»[5]։ Դրա վառ ապացույցներից է «Հյուսիսափայլի» առաջին տարվա երրորդ համարում «Ազգային բանաստեղծություն» խորագրի տակ լույս տեսած՝ հայ քահանայի դստեր և թուրք իշխանորդու դժբախտ սիրո պատմությունը, որի միջոցով Ստ. Նազարյանցը դատապարտում էր կրոնական անհանդուրժողականությունը[6]։ Կրոնական հանդուրժողականության գաղափարը պրոպագանդելու նպատակով «Հյուսիսափայլի» խմբագիրը թարգմանաբար տպագրեց նաև Ներսես Լամբրոնացու ատենախոսական նամակը։ Այնտեղ միջնադարի հայ նշանավոր մտածողը արտահայտում է հետևյալ միտքը. «Իմ համար հայ է թե՛ լատինացին, թե՛ հելլենացին և թե՛ աստ-

---

2 А. Хачатрян, История прогрессивной армянской философской общественно-политической мысли конца XVIII—середины XIX века, М., 1973, с. 134.

3 Ռ. Կարապետյան, Ստեփանոս Նազարյանց. Փիլիսոփայական հայացքները, Երևան, 1976, էջ 32։

4 Ստ. Նազարյանց, Վարդապետարան կրոնի, Մոսկվա, 1853, էջ 98—99։

5 Ռ. Կարապետյան, նշվ. աշխ., էջ 33։

6 «Հյուսիսափայլ», 1858, № 3, էջ 179—180։

ին։ Ուրեմն եթե ես լինեի մի ազգի ջատագով, ինչպես կարող էի հաղորդություն ունենալ մյուսների հետ։ Բայց դրանց բոլորի հետ, որ Թշնամի են միմյանց, խառնվելով գրավում եմ բոլորի սիրտը, նմանվելով Քրիստոսի առաքյալին, և կարող եմ ամեն մի հարցնողի պատասխանել, թե ճիշտ է իմ ուղին և Քրիստոսի սիրտը քանդում եմ ամեն մի բաժանող պատ, որ սովոր էր մի քրիստոնյա բաժանել մյուսից»[7]։

Ստ. Նազարյանցը կրոնական անհանդուրժողականությունը քննադատում էր նաև ս. Սոֆիայի տաճարի ճակատագրի օրինակով։ Նա գրում է, որ խաչակիր կաթոլիկները գրավելով Կոստանդնուպոլիսը, ս. Սոֆիայի տաճարը ենթարկեցին այնպիսի «գարշելի ապիրատությունների, որ միայն կարող էին համեմատվել հետո եկած տաճիկների տմարդությունների հետ»[8]։ Բացի տաճարը կողոպտելուց, «մի գազանարարո ամբոխ պար գալով անարգում էր արևելյան եկեղեցու ծիսակատարությունները»[9]։ Հայ լուսավորչի կարծիքով կրոնական ֆանատիզմը ոտնահարում է այլադավանների թե՛ հավատը, թե՛ մարդկային արժանապատվությունը։ Նա գրում է, որ թուրքերի կողմից Կոստանդնուպոլիսը գրավվելուց հետո ս. Սոֆիայի տաճարում ամեն ինչ փոխվեց. հանվեցին զանգակները, տաճարի գմբեթի խաչին փոխարինեց կիսալուսինը, փոխվեց պատարագի սեղանի դիրքը (դեպի Մեքքա)։ Արգելվեց քրիստոնյաների մուտքը տաճար։ Այդ հոյակապ քրիստոնեական տաճարում մահմեդականները «ծունկ էին շոքում այնպես անխոս ու անբարբառ, ինչպես մի գերեզման»[10]։

Կրոնական ֆանատիզմը հասել էր այն աստիճանի, որ կաթոլիկ հոգևորականները Կոստանդնուպոլսի գրավումը «համարում էին մի արդար պատիժ աստծուց, հոռմեական դավանաբանությունն ուրանալու համար»[11]։ Այլադավանների նկատմամբ իսլամի անհանդուրժողականությունը Ստ. Նազարյանցը քննադատում է նաև Հ. Պոնսուկյանին գրած նամակում։ Նրանում Ստ. Նազարյանցը, անդրադառնալով թուրքական բռնիշխանության դեմ բալկանյան սլավոնական ժողովուրդների ազատագրական պայքարի հարցերին, գրում է. «Ամենայն հրապարակական թերթերը լցված են այն ճալածանքի, այն եղեռնագործերի նկարագրությամբ, որ տաճիկները յուրյանց բարբարոսական ամբոխներով արած են քրիստոնյա բուլկարացոց, բոսնիացոց, սերբիացոց, հերցոգովինյացոց, այրելով և մորթելով այր ու կին ու երեխա և պղծելով կին ու աղջիկ, մինչ ամենեքյան լուռ են նմանապիսի անարկու անցքերի վերա, որ թե՛ անցյալ և թե՛ ներկա օրերում անցած էին Տաճկաստանի հայերի մեջ և այժմ իսկ գործվում են»[12] (ընդգծումը մերն է—Ռ. Ս.)։

Խղճի ազատության գաղափարի պաշտպանության և կրոնական անհանդուրժողականության քննադատության վառ ապացույց է նաև 1860 թ. «Հյուսիսափայլում» տպագրված «Մենդելսոն-Լեսինգ և Լավատեր» հոդվածի հավելվածը։ Այնտեղ Ստ. Նազարյանցը վերլուծում է Կոստանդնուպոլսում տեղի

---

7 Նույն տեղում, № 11, էջ 356։

8 Նույն տեղում, 1859, № 2, էջ 137։

9 Նույն տեղում, էջ 138։

10 Նույն տեղում, էջ 144։

11 Նույն տեղում, էջ 145։

12 Ստ. Նազարյան, Նամականի, Երևան, 1969, էջ 470։

ունեցած այն տխուր միջադեպը, երբ լուսավորչական հայերը չէին համաձայնում, որ «մի պրոտեստանտացած հայի» թաղեին իրենց գերեզմանատեղը։ Ստիպված միջամտում են զինվորները, և միջադեպն արյունահեղ վախճան է ունենում։ Կոնկրետ այս դեպքի համար, սակայն, Ստ. Նազարյանցը չի մեղադրում հայ եկեղեցուն, որովհետև գտնում էր, թե «հայոց եկեղեցին չունի պատասխանատու լինել ազգի անկիրթ բազմության հալածասեր և ֆանատիկոս բարքի համար»[13]։ Նրա կարծիքով հայոց եկեղեցին «միշտ եղել է լայնասիրտ և վեհանձն դեպի այլածես և այլատոհոր այլազգի քրիստոնեայք»[14], և նույնիսկ փաստեր է բերում շատ հայկական գերեզմանատներում այլազգիների ու այլադավանների թաղելու մասին։ Եվ «եթե մեր սիրելի եղբարքը (Թուրքահպատակ հայերը—Ռ. Ս.) դեռևս անփրկելի կորած չէին ֆանատիկոսության ուտող մաշող թույնից,— գրում է նա,— եթե մեր պոլսեցի հայրենակիցների մեջ կա դեռևս բանական մտածողության և դատողության տեղիք»[15], նրանք պետք է ունկնդրեն «Հյուսիսափայլին», քանի որ չի կարելի հալածել այն քրիստոնյաներին, որոնք այլ ձևով են հավատում, որովհետև նրանց դավանանքի հիմքը, աղբյուրը Ավետարանի ուսմունքն է, որովհետև «քրիստոնեության օրենքը» օրենք է «ազատության և ոչ ծառայության, օրենք սիրո և ոչ ատելության»[16]։ Հայ լուսավորիչն այստեղից եզրակացնում է, որ լուսավորչական հայը չպետք է հալածի այլադավան հային և քննադատում է բոլոր նրանց, ովքեր դավանական տարբերությունների պատճառով հալածում են իրենց «քրիստոնյա եղբորը»։ «Մեր լուսավորչական քրիստոնյան,— գրում է Ստ. Նազարյանցը,— դառնալով պրոտեստանտացած քրիստոնյա, այնուամենայնիվ, մնում է մեր եղբայրը թե՞ ազգաբար և թե՞ քրիստոնեաբար. ազգաբար, ըստ որում հայկական արյունը չի փոխվում երակների մեջ, դառնալով այլ եկեղեցու անդամ. քրիստոնեաբար, ըստ որում Քրիստոսը պատկանում է և պրոտեստանտին, և հային, որչափ ևս տարբեր լինեին նոցա աստվածապաշտության կարգերը»[17]։ Ինչպես տեսնում ենք, խղճի ազատության իր պահանջը սուրբ գրքով հիմնավորելով հանդերձ, Ստ. Նազարյանցն ավելի հեռու է գնում, միանգամայն կոնկրետ դնելով դավանանքի ազատության հարցը և մերկացնելով այլադավանների հալածանքները։ Նա մասնավորապես գրում է. «Ինչ իշխանություն ունի մի քրիստոնյա մի քրիստոնեի խղճի ազատության վերա. մարդս այո, իբրև քաղաքացի պարտական է հնազանդել այս և այն աշխարհական օրենքին այս և այն թագավորության մեջ, ուր ունի նա յուր օթևանը։ Բայց կրոնական բաների մեջ նա գործ ունի յուր խղճի և յուր աստծո հետ. նա պատասխանատու չէ ոչ ոքի յուր ընկերներից, և ոչ ոք դրանից իշխանություն չունի հրամայել նորա խղճին կամ հալածել ու թշնամանալ նորան, որովհետև կցորդ չէ մեր մասնավոր հավատական կարծիքներին»[18]։ Ստ. Նազարյանցը քննադատում էր այն կարմամիտներին ու տգետներին, որոնք ազգի պահպանությունը տեսնում էին

13 «Հյուսիսափայլ», 1860, № 10, էջ 307։
14 Նույն տեղում։
15 Նույն տեղում, էջ 308։
16 Նույն տեղում։
17 Նույն տեղում, էջ 308—309։
18 Նույն տեղում։

կրոնի արտաքին ձևի և տեղական քարացած սովորությունների պահպանության մեջ։ Նա գտնում էր, որ ազգը և կրոնն այլ բաներ են և ունեն տարբեր խնդիրներ։ Ազգն ունի «աշխարհական խորհուրդ», իսկ կրոնը «իբրև գերաշխարհիկ բան, իբրև անմարմին ըմբռնողություն, գործ ունի ուղղակի մարդուս խղճի և աստծո հետ»[19]։ Այստեղից նա եզրակացնում է, որ «Հայերը թե՛ լուսավորչականք, թե՛ կաթոլիկք և թե՛ պրոտեստանտք, մնում են միշտ արյունակից եղբարք, մի ազգի որդիք, մի լեզվի կցորդք, մի ազգային պատմության (այսինքն միևնույն նախահարց ու նախամարց) ժառանգներ»[20]։ Ստ. Նազարյանցի կարծիքով, ազգի պաշտպանության հիմքը լեզուն է, որով ազգերը տարբերվում են միմյանցից։ Իսկ դավանանքով հայերը կարող են տարբեր լինել, և սխալ է մտածել, թե «այլադավան քրիստոնյա հայը արդեն հոգով ու սրտով կտրված է ազգից, պիղծ է նա, որովհետև կաթոլիկ է կամ պրոտեստանտ»[21]։ Իր այս ճիշտ միտքը հիմնավորելու համար նա օրինակ է բերում գերմանական ռեֆորմացիան և նշում, որ կաթոլիկությունը և բողոքականությունը Գերմանիայում չեն խանգարում գերմանացիների «հայրենասիրությանը, նոցա ազգային առաջադիմությանը, նոցա քաղաքական միաբանությանը, նոցա մատենագրության բարգավաճանքին»[22]։ Իր հայացքը հառելով դեպի Եվրոպա, Ստ. Նազարյանցը հայերին կոչ էր անում հրաժարվել կրոնական անհանդուրժողականությունից, եղբայրաբար բուժել ազգի վերքերը, որովհետև ազգը պատկանում է և՛ լուսավորչականին, և՛ կաթոլիկին, և՛ բողոքականին։ Նա գտնում էր, որ նրանք երեքն էլ իրենց դրոշի վրա պետք է արձանագրեն երեք բառ, «որպես նոցա կյանքի թանկագին առածք, որպես նոցա աչքի բիբք. եղբայրասիրություն, հայրենասիրություն, միաբան անձնազոհություն հասարակաց հայրենիքի համար»[23]։ Դրան հասնելու համար Ստ. Նազարյանցն առաջարկում էր նաև հայ եկեղեցու ռեֆորմ։ Նա նկատում է, որ «ԵԹԷ հայոց եկեղեցին պետք է այս մեր կանող ժամանակին դիմանա, պահպանվի, ապա անպատճառ պիտի է նորան նորոգել յուր հնացած և մաշված կենդանությունը, միտ դնելով առաջադեմ մարդկության պիտույքին։ Հայոց եկեղեցին պիտի է մի ռեֆորմ առներ ոտքից մինչև գլուխ, այսինքն մի ազգու վերանորոգություն Ավետարանի հաստատմատ հիման վերա. իհարկե ներգործելով արմատից դեպի վեր. ժողովրդի և հոգևորների դաստիարակությամբ և կրթությամբ մեր օրերի լուսավոր հոգու համեմատ...։ Թող ինքը նախ և առաջ նորոգվի կենդանությամբ, դալարանա, ծաղկի և զարդարվի արժանի պտուղներով»[24]։

Ստ Նազարյանցը ժողովրդի լուսավորության լավագույն բանալի էր համարում աշխարհաբար լեզվի զարգացումը և այն դիտում էր կամուրջ եվրոպական լուսավորության և հայ ժողովրդի միջև, իսկ կենդանի, նորոգված կրոնը՝ քրիստոնեական բարոյականության ոգով ժողովրդի դաստիարակության միջոց։ Նա կամենում էր իր ժողովրդին տեսնել լուսավորված և որ «ազ-

---

19 Նույն տեղում։
20 Նույն տեղում։
21 Նույն տեղում։
22 Նույն տեղում, էջ 310։
23 Նույն տեղում, էջ 311։
24 Նույն տեղում, էջ 312—313։

գի ճշմարիտ օգուտը պիտո է լինի ամենայն խելոք և արժանի հայի առաջին և վերջին նպատակը»[25]։

Հավատարիմ մնալով խղճի ազատության իր հավատամքին, 1860 թ. «Հյուսիսափայլի» 11-րդ համարում Ստ. Նազարյանցը թարգմանաբար հրատարակեց Բեռնար-դեն դե Սեն Պիեռի «Սուրատի դահվետունը» պատմվածքը, քննադատելով հերոսներից յուրաքանչյուրի այն պնդումը, թե միակ ճշմարիտ կրոնը գտնվում է միայն իր հայրենի աշխարհում[26]։

«Հյուսիսափայլի» 1860 թ. 10, 11-րդ համարներում լույս տեսած նյութերում արտահայտված առաջադիմական գաղափարների պատճառով Ստ. Նազարյանցի դեմ ուղղված հալածանքները, հերյուրանքներն ու մեղադրանքները ավելի սաստկացան։ Սակայն կղերաֆեոդալական հոսանքի ներկայացուցիչների այդ մեղադրանքներից հետո նա ոչ միայն չնահանջեց իր լուսավորական հայացքներից և սկզբունքներից, այլև «Հյուսիսափայլի» 1860 թ. 12-րդ համարում նրանց երեսին շպրտեց. «Ավետարանի սուրբ գրվածքն իսկ, առանց ձգելու քննության բովի մեջ չեն ընդունելու ազգերը»[27]։ Հետևաբար, նա չէր կարող երբեք ներողամիտ լինել այն հոգևորականների նկատմամբ, որոնք «դիվային նախանձով վառված աշխատում են անգործ կացուցանել աշխարհական հեղինակների գրվածքը»[28]։

Խղճի ազատության գաղափարի պաշտպանությամբ հանդես եկող Ստ. Նազարյանցը քննադատում էր նաև ռուս ուղղափառ եկեղեցու այն քաղաքականությունը, որով վերջինս փորձում էր տարբեր միջոցներով հայ Գրիգորյան եկեղեցին ձուլել իր հետ։ Այդ մասին իր բացասական վերաբերմունքը նա հայտնել է Խ. Լազարյանին գրած նամակում։ Այդտեղ Ստ. Նազարյանցը ցարիզմի գաղութային քաղաքականության արտահայտություններից մեկն էլ համարում է այն, որ այլազավան քրիստոնյաներին ռուս ուղղափառ եկեղեցին ձգտում էր ենթարկել իրեն կամ ձուլել իր հետ։ Փոխելով ոչ ռուս ժողովուրդների, մասնավորապես հայության լեզուն և կրոնը, ցարիզմը ձգտում էր դրանով իսկ ռուսացնել նրանց։ Հայ ժողովրդի նկատմամբ ցարիզմի վարած նման քաղաքականության դրսևորումներից է Քիոսի մետրոպոլիտ Գրիգորի՝ «Խրիստյանսկոյե չտենիե» ամսագրում 1868 թ. լույս տեսած հոդվածը։ Նրանում հոդվածագիրը հայ Գրիգորյան եկեղեցուն առաջարկում էր վերանայել մի շարք դավանաբանական բնույթի առանցքային հարցեր, որոնցով այն տարբերվում է ուղղափառությունից։ Ստ. Նազարյանցը գտնում էր, որ այդ փոփոխությունները «կարող են մեր ժողովրդի մեջ միայն առիթ տալ տխուր և կործանարար գժտություններին»[29]։ Դեռ ավելին. Ստ. Նազարյանցը կյանքի վերջին տարիներին բացահայտ քննադատում է ցարիզմի ասիմիլիատորական քաղաքականությունը և 1870 թ. Մ. Փանյանին ուղղած նամակում գրում է. «Իմ կարծիքով, պահանջել, որ մեր ռուսական տերությունը հոգատար լինի հայոց լեզվի և ազգային ուսման բարգավաճանքին,

---

25 Ստ. Նազարյանց. Վարդապետարան կրոնի, էջ 7։
26 «Հյուսիսափայլ», 1860, № 11, էջ 348։
27 Նույն տեղում, № 12, էջ 503։
28 Ստ. Նազարյանց. Երկեր, հ. 1, Թիֆլիս, 1913, էջ 144։
29 Ստ. Նազարյան. Նամակների, էջ 333։

այդ կարելի չէ. նորա ինտերեսն է, որ հայք ամենայն մասամբք, լեզվով և գիտությամբք զուգախառնվին ուստաց հետ»[30],

Ստ. Նազարյանցը խղճի ու մտքի ազատության հարցերը «Հյուսիսափայլի» էջերում շոշափել է նաև կապված մի նամակի հետ, որը ստացվել էր Շամախուց։ Նամակագիրները բողոքել էին, որ Շամախում Մովսես վարդապետը, բռնանալով իրենց խղճի ու մտքի վրա, արգելել է առանձին խմբով զբաղվել սուրբ գրքի ընթերցանությամբ, դրա մեջ տեսնելով հերձվածություն։ Հայ հոգևորականի այս անհանդուրժողականությունը քննադատելով, Ստ. Նազարյանցը բացականչում է. «Օ՜հ, ինչ տեղ է հասել մեր թշվառությունը, հոգևորների վայրենաբարո տգիտությամբ և անամոթությամբ»[31]։

Ստ. Նազարյանցը ազատությունը և արդարությունը ճնշելու մեջ մեղադրում էր նաև կղերաֆեոդալական հոսանքի ներկայացուցիչներին, որոնց նա անվանում էր «հայկական եզվիտներ»։ Հայ լուսավորչի կարծիքով սրանք «պատրաստ են աղավաղել ամենայն բարոյական հիմունք մարդկային կյանքի, պղտորել և մռայլել ամենայն ճշմարտություն, միայն թե կարողանային հասնել յուրյանց նպատակին, որ է իշխանություն և հրաման ազատ հոգիների վերա»[32]։ Նա գտնում էր, որ ազգային գիտակցությունը և խիզճն առաջացել են այն ժամանակ, երբ սկսվեց կործանվել Հռոմի պապի իշխանությունը։ Սակայն, ինչպես ցույց է տալիս եվրոպական պետությունների օրինակը, գիտության և լուսավորության բացակայության դեպքում անհնար է մտածել ազգային ազատության մասին։ Նրա կարծիքով հավատի ազատությունն անպայման պահանջում է բոլոր դավանանքների հավասարություն։ Դավանանքի ազատությունը Ստ. Նազարյանցը չի ըմբռնում նեղ իմաստով, այլ գտնում է, որ «հավատի ազատության անհրաժարելի հետևություն է մտածության ազատությունը»[33]։ Ուստի, ցանկանալով հաստատել խղճի ու մտքի ազատություն, հայ լուսավորիչը ցույց էր տալիս այդ սահմանափակումների (որոնցից էր նաև մամուլի ազատության ճնշումը) քաղաքական ու բարոյական վնասները։ Նրա խորը համոզմամբ խելացի պետական կարգում պետք է լինի մամուլի ազատություն։ Ճիշտ է, Ստ. Նազարյանցը պետությունը դիտում էր որպես խղճի ու մտքի ազատության մարմնացում, բայց և այնպես նա պետությանը և եկեղեցուն իրավունք չէր վերապահում պարտադրել իրենց բարոյականությունը, որովհետև «թագավորությունը չէ ամենակարողը. միտքը դրած է նորանից դուրս և մտածողությունը դրած է նորանից վեր. միտքը որպես հասարակաց կարծիք առաջնորդում է և իշխում է նորան. միտքը որպես գիտություն նվաճվել չի կարող նորա իշխանության տակ։ Այլև օրեցօր կերպարանվող հասարակաց կարծիքը, այսինքն օրախոսական տպագրությունը պիտի է ունենա համարձակություն ծլելու և աճելու, որչափու հասակ առնի իբրև մի ամուր տունկ»[34]։ Ստ. Նազարյանցի կարծիքով, եթե պետությունը ցանկանում է լինել բարոյականության պաշտպան, այն պետք է ոչ թե պայքարի մտքի դեմ, այլ հիմնվի նրա վրա, որովհետև «տպագրությունը եր-

30 Նույն տեղում, էջ 381։

31 Ստ. Նազարյանց. Երկեր, հ. I, էջ 403։

32 Նույն տեղում, էջ 83։

33 «Հյուսիսափայլ», 1862, № 4, էջ 187։

34 Նույն տեղում, էջ 189։

բեք վտանգավոր չէ... Տպագրությունը սխալվում է, բայց չէ մեղանչում. նա չէ գործում հանցանք... այդ սխալը կարելի է հերքել, բայց ոչ պատժել»[35]։ Հայ լուսավորիչը գտնում էր, որ այն պետությունը, որը վախենում է ժողովրդի լուսավորությունից, գիտության տարածումից ու առաջադիմությունից և այդ բոլորը համարում է ավելորդ, «հիմնվում է ահ ու դողի, բայց ոչ սիրո և խոստովանության վերա, և այդպես ինքը դատապարտում է յուր անձը արժանի կործանման»[36]։

Ստ. Նազարյանցը «Հյուսիսափայլի» հրատարակության առաջին տարիներին սուր քննադատության չի ենթարկել ցարիզմը, նույնիսկ հաճոյախոսել է, նպատակ ունենալով իր ամսագիրը զերծ պահել փակվելու վտանգից։ Սակայն ի պատիվ Ստ. Նազարյանցի, պետք է ասել, որ հետո նա հանդես եկավ ցարական գրաքննության բացահայտ քննադատությամբ։ Այսպես, օրինակ, 1863 թ. նա իր նամակներից մեկում գրում է. «Հայք կամին, որ ես գործը շուտացնեմ, բայց և իմ թևերը կտրում է ցենզուրան»[37]։ Դեռ ավելին, նա հետագայում սերտ կապ է տեսնում ցարական միապետության և եկեղեցու միջև։ Կաթողիկոսի ընտրության առիթով, 1865 թ. նա Մ. Նալբանդյանին զայրույթով գրում է. «Եթե ընտրողը տերությունն է ազգի քամակում և ազգի անունով, այնուհետև ինձ ու քեզ ի՞նչ»[38]։

Ստ. Նազարյանցը գրաքննության առաջացումը կապում էր կրոնի հետ։ «Երբ քննենք ցենզուրայի առաջացությունը պատմաբանաբար,— գրում է նա,— դա է հռոմեական պապերի եկեղեցական իշխանության գյուտը. դա առաջին անգամ նեռս բերվեցավ ընդդեմ ռեֆորմատորական շարժողությունների եկեղեցու մեջ և եկեղեցուց դուրս։ Հռոմի պապերից անցավ դա իշխանների ձեռքը, որ դորան յուրյանց ժառանգած եկեղեցական մեծավորության ցուցակի մեջ գտել էին, որ այս զենքով սկսան նոքա այնուհետև առաջ տանել հին վկայությունների դարանագործ, բայց անօգուտ պատերազմը ընդդեմ ազատ մտածողության և գիտության»[39] (ընդգծումը մերն է.— Ռ. Ս.)։

Հայ լուսավորիչը գրաքննության առաջացումը կապում էր կրոնի հետ, որովհետև, հավանաբար, հասկանում էր, որ եկեղեցու դեմ ուղղված բոլոր «ռեֆորմատորական», ազանդավորական շարժումները, որոնք եկեղեցու կողմից որակվել էին որպես հերետիկոսություններ, արտացոլել են որոշակի սոցիալական խմբերի շահերը։ «Պարզ է, որ այդ պայմաններում,— գրում է Ֆ. Էնգելսը,— ընդհանուր ձևով արտահայտված բոլոր հարձակումները ֆեոդալիզմի դեմ և ամենից առաջ հարձակումները եկեղեցու դեմ բոլոր հեղափոխական սոցիալական ու քաղաքական, դոկտրինաները պետք է միաժամանակ նաև իրենցից ներկայացնեին զերաղանցապես աստվածաբանական հերետիկոսություններ։ Որպեսզի հնարավոր լիներ հարձակվել գոյություն ունեցող հասարակական հարաբերությունների վրա, անհրաժեշտ էր նրանցից խլել սրբության լուսապսակը»[40]։ Բացառություն չէր կազմում նաև

35 Նույն տեղում, էջ 190։

36 Նույն տեղում։

37 Ստ. Նազարյան, Նամականի, էջ 264։

38 Նույն տեղում, էջ 275։

39 «Հյուսիսափայլ», 1862, № 4, էջ 190։

40 Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Վ. Ի. Լենին, Կրոնի մասին, Երևան, 1977, էջ 164։

Ստ. Նազարյանցի ժամանակաշրջանը։ Նա ևս հանդես էր գալիս կրոնի քննադատությամբ, խղճի ու մտքի ազատության պաշտպանությամբ։ Հայ լուսավորիչը նկատի ուներ ոչ միայն կաթոլիկական ինկվիզիցիան, այլև էջմիածնի Սինոդն ու ցարական դրաքննությունը, երբ գրում էր «Այրելը չէ պատասխանել...։ Պատժելով կարելի չէ բնաջինջ առնել մի գաղափար. մտածողի վրա պատիժ դնելը ցուցանում է միայն հերքողության դժվարությունը»[41]։

Ստ. Նազարյանցը կանգ չի առնում խղճի ու մտքի ազատության գաղափարի ըմբռնման կես ճանապարհին։ Նա գտնում էր, որ պետությունը պետք է հիմնվի մտքի և գիտության վրա, տալով դրանց ազատ գործունեության ասպարեզ, որովհետև շատ բան ունի դրանցից սովորելու։ Պետության նկատմամբ կրոնը համարելով մասնավոր գործ, նա առաջարկում էր եկեղեցին անջատել պետությունից, դպրոցն էլ եկեղեցուց ու լայն ճանապարհ տալ գիտության ու լուսավորության գործին[42]։

Ստ. Նազարյանցը հանդես էր գալիս խղճի ու մտքի ազատության ըմբռնման բուրժուական հայեցակետից։ Ինչ խոսք, նման տեսակետը ժամանակին առաջադիմական նշանակություն ուներ հայ իրականության մեջ, մանավանդ որ հայ լուսավորիչը հույս ուներ դրանով պահպանել հայ ժողովրդի ազգային ինքնությունը։ Դա, ըստ նրա, հնարավոր էր անել դիտության ու լուսավորության տարածման միջոցով։ Ստ. Նազարյանցը գտնում էր, որ իր ժամանակը պատերազմ է տգիտության և գիտության միջև, իսկ անտարբեր մնալ այդ պատերազմում՝ անկարելի է։ Նա գրում էր. «Հարկավոր է կուսակցություն կամ աջակողմյան կամ ձախակողմյան դասի հետ»[43]։ Հայ լուսավորիչը կոչ էր անում աներկյուղ պայքար մղել խավարի սպասավոր զինվորների հետ և հաղթել։ Նա համոզված էր, որ հաղթանակը դժվար է ձեռք բերվում և ճշմարտությունը սովոր է աճել և տարածվել «հալածանքով միայն»։ Ստ. Նազարյանցը չընկճվեց այդ հալածանքներից. նրա ձեռնարկած մեծ գործին չկարողացան խոչընդոտել ո՛չ պահպանողական հակառակորդների, ո՛չ էջմիածնի Սինոդի և ոչ էլ ցարական գրաքննության հարձակումները։ Պաշտպանելով խղճի ու մտքի ազատության գաղափարը, իր ժողովրդի լուսավորությունը նա կապում էր ոչ թե խավարասեր ու անկիրթ հոգևորականության հետ, այլ «լուսավորյալ աշխարհականների» և կոչ էր անում չպաշտպանել առաջադիմության այդ «խափանարարքին ու հալածողին» և «ջախջախել այդ օձի գլուխը»[44]։

Այսպիսով, XIX դ. 40—70-ական թվականներին Ստ. Նազարյանցը զգալի դեր խաղաց հայ իրականության մեջ լուսավորական գաղափարների տարածման գործում։ Սակայն նրա հայացքները, թեև ժամանակին առաջադիմական էին, բայց և այնպես սահմանափակ էին։ Դրա վկայություններից է Ստ. Նազարյանցի այն պահանջը, թե խղճի և մտքի ազատության հարցը պետք է լուծել նորոգված կրոնի օգնությամբ։

---

41 «Հյուսիսափայլ», 1862, № 4, էջ 190։

42 Ստ. Նազարյանց, Երկեր, հ. 1, էջ 68, 90, Նույնի՝ Նամականի, էջ 111, «Հյուսիսափայլ», 1862, № 4։

43 Ստ. Նազարյան, Նամականի, էջ 208։

44 Նույն տեղում, էջ 326։

ВОПРОС СВОБОДЫ СОВЕСТИ И МЫСЛИ В МИРОВОЗЗРЕНИИ СТ. НАЗАРЯНЦА

РАЗМИК СААКЯН

Резюме

Ст. Назарянц выступил в русле общих идей армянского просвещения 40—70-х гг. XIX века. Он подверг резкой критике религиозный фанатизм. В своих произведениях и переводах трудов европейских просветителей он ратовал за религиозную терпимость и свободу совести и мысли. Условием достижения последних он считал просвещение народа. Он не ограничивался требованием реформы церкви. Ст. Назарянц считал, что задача просвещения народа должна быть «первой и последней целью» каждого армянского мыслителя. Он четко и объективно оценивал положение своего народа и с позиции свободы совести и мысли критиковал православие и ислам, ибо они отражали колониальную политику русского царизма и турецкого господства. В борьбе против консерваторов и реакционеров Ст. Назарянц до конца остался непоколебимым поборником просветительства.